
**ՄՏԱՎՈՐ ԿԱՊԻՏԱԼԸ՝ ՈՐՊԵՍ
ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՅՈՒՐՈՐԴԻՆԱԿ ԱՐՏԱՀԱՅՏՉՍՁԵՎ**

ԳԱԼՍՅԱՆ Հ. Ն.

Վերջին տարիներին ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան տնտեսագիտական գրականությունում մեծ ուշադրություն է դարձվում մտավոր կապիտալի ուսումնասիրությանը: Այդուհանդերձ, այդ հիմնախնդրի մի շարք հայեցակետեր բավականաչափ դիտարկված չեն: Խորապես արդիական մի շարք հիմնահարցերի տրվում են պարզեցված պատասխաններ, իսկ միևնույն հարցի վերաբերյալ գոյություն ունեն մի շարք իրարամերժ կարծիքներ:

Մարդկային կապիտալի տեսության առաջացումն արտադրության արդյունաբերացման արդյունք է: Դրան առչնվող հիմնախնդիրներն արծարծվել են դեռևս դասական քաղաքատնտեսության հեղինակների աշխատություններում: Այս տեսության ներկայացուցիչները, առանձնացնելով արդյունաբերական հասարակության յուրահատկությունները, արժևորեցին աշխատողին՝ որպես կապիտալի յուրօրինակ ձև: Դիցուք՝ այդպիսին էր Ու. Պետիի մոտեցումը, որը երկրի հարստության հաշվարկներում ներառում էր նաև մարդկային ներուժը: Հետագայում Ա. Մմիթը դասակարգել է կապիտալը՝ հիմնական և շրջանառու: Հիմնական կապիտալի մեջ ներառել է նաև «ձեռք բերված կամ օգտակար ընդունակությունները»: Այդպիսով, մարդկային կապիտալի տեսության զարգացումը արտադրության տեխնիկատեխնոլոգիական միջոցների ու հնարավորությունների փոփոխության և մի շարք նորարարական ալիքների արդյունքն է:

Մարդկության պատմության ողջ ընթացքում բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնող տնտեսական աճը կազմել է տարեկան մոտավորապես 0.1%¹: Համաշխարհային արդյունաբերության աճը մեծ թափ է ստացել XVIII դ. վերջերից, և վերջին 200 տարվա ընթացքում այդ ցուցանիշը կազմել է 1.2%²: Համաշխարհային արտադրության աճի այդպիսի թռիչքը կապված էր նորարարության առաջին ալիքի հետ (XVIII դ. 80-ականից մինչև XIX դ. 40-ական թթ.), որը հիմնված էր գոլորշուց ստացվող էլեկտրաէներգիայի լայնածավալ կիրառության վրա: Երկրորդ ալիքը (XIX դ. 40-ականից մինչև XIX 90-ական թթ.) «երկաթգծերի դարաշրջանն է»: Երրորդը (XIX դ. 90-ականից մինչև XX դ. 50-ական թթ.) էլեկտրաէներգիայի և ավտոմեքենաների դարաշրջանն էր: Հաջորդը տեղեկատվականն է, որը և հետարդյունաբերական հասարակության զարգացման հիմքերից մեկը դարձավ:

¹ Տե՛ս **Иноземцев В.**, *За пределами экономического общества*, М., 1998, с. 56, 123.

² Նույն տեղում, էջ 57:

Յուրաքանչյուր նորարարական ալիք, առաջին հերթին ուղղված լինելով տեխնոլոգիաների, մեքենաների և սարքավորումների արդիականացմանը, առաջ է բերում աշխատուժի որակավորման նոր պահանջներ:

Ժամանակակից գրականության մեջ մեծ նշանակություն է տրվում արտադրական գործընթացում անհատի դերի ուսումնասիրությանը: Սոցիալ-տնտեսական ոլորտներում անհատի դերն արտադրական գործընթացում դասակարգվում է ֆիզիկական և մտավոր առումով: Որպես ֆիզիկական աշխատանք են դիտարկվում հետևյալ գործառույթները՝ էներգետիկ կամ շարժողական (մարդը՝ որպես էներգիայի աղբյուր), տեխնոլոգիական կամ կատարողական (աշխատանքի առարկայի մշակում), տեղափոխման (տարածության մեջ աշխատանքի առարկայի և գործիքների տեղաշարժ):

Մտավոր գործառույթներն են՝ նախապատրաստական (ծրագրավորում, նպատակների սահմանում և այլն), կառավարող (տեխնոլոգիական գործընթացի վերահսկում և կարգավորում), հաշվիչ-տրամաբանական, ճարտարագիտական ստրուկտորական և գիտական, վարչական: Այսպիսով, մկանային ուժի վրա հիմնված աշխատանքը կոչվում է ֆիզիկական, իսկ խնդիրների լուծմանն ուղղված անհատի մտավոր գործունեությունը՝ մտավոր: Դարեր շարունակ արտադրական գործընթացի հիմնական բաղադրիչը մարդու ֆիզիկական աշխատանքն էր: Անհատի արտադրական գործառույթների գնահատման որակական նոր փուլը կապված է XX դ. կեսին սկսված ԳՏՀ-ի արդյունքների ներդրման և արտադրության ավտոմատացման հետ: Աշխատողի կարգավիճակի գործառնական փոփոխության տեսանկյունից այդ գործընթացի էությունն այն է, որ աշխատանքի գործիքները կառավարող մարդուն փոխարինելու է գալիս յուրահատուկ մի մեխանիզմ, որի հետևանքով տեղի է ունենում անհատի յուրօրինակ օտարում տեխնոլոգիական գործընթացից: Նոր պայմաններում աշխատող անհատից պահանջվում էին նոր հմտություններ: Ավտոմատացված արտադրական գործընթացի ղեկավարումը պահանջում էր ոչ միայն կիրառական հմտություններ և փորձ, այլև ընդհանուր, տեխնիկական և հատուկ գիտելիքների որոշակի մակարդակ:

Աստիճանաբար աճում էր մտավոր աշխատանքային ծախսումների տեսակարար կշիռն արտադրական ոլորտում, տեղի էր ունենում աշխատանքի հագեցում մտավոր գործունեությամբ և ստեղծագործական մտածելակերպով: Նման աշխատողը դառնում էր անփոխարինելի՝ ի հաշիվ բարձր որակավորման: Այդ որակը հազվագյուտ է և, միաժամանակ, ձեռքբերովի: Իսկ այս գործոնի հիմքը կրթությունն է: Աշխատանքային ունակությունները դադարեցին անհատի բնական կարողությունների շարունակությունը լինելուց, դրանց ձեռքբերումը դարձավ առանձնացված մի գործընթաց, որը պահանջում էր ներդրումային լուրջ քաղաքականության իրականացում:

Մինչ ԳՏՀ-ն աշխատողի համար իր ունակություններն ապրանք էին, իսկ ձեռներեցի համար՝ արտադրական կապիտալի տարր: Աշխատավորի համար իր իսկ արտադրական ունակություններում կատարված ներդրումներն ապրանքային բնույթ ունեին, ձեռներեցի համար՝ կապիտալի: Արտադրական սպառման ընթաց-

քում ներդրման հատույցն աշխատավորի համար հանդես էր գալիս ապրանքային ձևով՝ որպես աշխատավարձ, իսկ ձեռներեցի համար՝ շահույթի տեսքով՝ որպես որոշակի մասհանում վարձակալության նպատակով կատարված ներդրումների դիմաց ստացվող հատույթից:

Շուկայական հարաբերությունների և արդյունաբերական արտադրության առավել բարձր մակարդակներում մարդու արտադրողական ուժերը գործում և վերարտադրվում են ոչ թե որպես ապրանքային կապիտալի մաս, այլ որպես առանձնացված, յուրահատուկ մարդկային կապիտալ: Այժմ ոչ միայն ձեռներեցը, այլև աշխատողն է ներդրումներն արտադրողական ունակություններում ընկալում որպես կապիտալացված խնայողություններ: Մտավոր կապիտալի օգտագործումը բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը և եկամուտները, նպաստում մակրո- և միկրոմակարդակներում ներդրումների սոցիալական հատուցման աստիճանի բարձրացմանը³:

Արտադրության ավտոմատացումը՝ որպես ԳՏԱ-ի կարևոր բաղադրիչ, փոփոխության ենթարկեց ինչպես աշխատողի արտադրական գործառնությունները, այնպես էլ տնտեսավարող սուբյեկտների վերաբերմունքը դրանց հանդեպ՝ նպաստելով աշխատանքային ունակության՝ ապրանքից կապիտալի վերաձեռնում: Այս ամենը, բարձրացնելով աշխատողի արժեքը, նրան տնտեսագիտական ուսումնասիրություններում որակապես նոր օբյեկտ դարձրեց: Այդուհանդերձ, չնայած առանձին հետազոտություններին, մարդկային կապիտալի ամբողջական հայեցակարգ ձևավորվեց միայն XX դ. կեսին, երբ մարդու արտադրողական ներուժն ընդունվեց որպես տնտեսական աճի հասարակական առաջընթացի գլխավոր գործոն⁴: Եզրահանգվեց նաև, որ տնտեսության արդյունավետ գործունեությունն առավելապես կախված է աշխատանքային հարաբերությունների ներդաշնակությունից, վերջնական բարձր ցուցանիշներ ապահովելու՝ աշխատողների բարոյական և նյութական շահագրգռվածությունից: Բարձրորակ կադրերի բացակայությունն ուղղակի ազդում է ազգային եկամտի արտադրության ծավալների և խնայողությունների մակարդակի վրա⁵:

Մարդկային կապիտալի արդի տեսության հիմնադիրն է ամերիկացի տնտեսագետ, Չիկագոյի դպրոցի հայտնի ներկայացուցիչ Թ. Շուլցը: Նրա տեսության հիմնական դրույթները հրատարակվեցին 1960 թ.⁶: Նմանօրինակ հետազոտություններ է կատարել նաև նույն դպրոցից Հ. Բեքքերը⁷: Վերոնշյալ գիտնականների հիմնարար՝ դասական աշխատությունները հետագայում այդ բնագավառում իրականացվող հետազոտությունների ուղեցույցը դարձան: Տնտեսագիտական

³ Տե՛ս **Дятлов С. А.**, *Теория человеческого капитала*, СПб., 1996, с. 27.

⁴ Տե՛ս **Wolsh J. R.**, *Capital Concept Applied to Man (The Quarterly Journal of Economics, 1935, N 2, p. 255-285)*.

⁵ Տե՛ս **Дятлов С. А.**, *նշվ. աշխ.*, էջ 13:

⁶ Տե՛ս **Schultz T.**, *Capital Formation by Education (Journal of Political Economy, vol. 68, 1960, p. 11)*.

⁷ Տե՛ս **Becker G. S.**, *Human Capital: A Theoretical Analysis (Journal of Political Economy. Supplement. October, 1962, p. 13)*.

մտքի զարգացման գործում նրանց ավանդը գնահատվեց ըստ արժանվուն՝ երկուսին էլ շնորհվեց Նոբելյան մրցանակ (Վ. Շուլցին՝ 1979 թ., իսկ Հ. Բեքբերին՝ 1992 թ.):

Արտադրության զարգացմանը համահունչ արտադրողական ուժերի բարեշրջումը անխուսափելի դարձրեց մարդկային, մտավոր կապիտալի ձևավորման և վերարտադրության հիմնահարցերի խորացված ուսումնասիրությունը:

Արտադրության հետագա մտավոր հագեցումը և իրագեկումը, մտավոր արտադրանք ստեղծող արտադական նոր ճյուղերի զարգացումը նպատակահարմար դարձրին աշխատուժի մտավոր գործառույթների սահմանազատումը: Մտավոր կապիտալը սահմանվել է որպես հատուկ գիտելիքների և կուտակված մտավոր ունակությունների միասնություն, որն անմիջականորեն մասնակցում է արտադրության գործընթացում կամ թույլ է տալիս կազմակերպել ձեռնարկության գործունեությունը: Այն երկու բաղադրիչի՝ մարդկային և կառուցվածքային մտավոր կապիտալների համակցություն է: Մարդկային մտավոր կապիտալն ընդգրկում է հասարակության առավելապես կիրթ մասը՝ ժողովրդի հոգևոր, մշակութային և մտավոր ներուժը կրողներին: Մտավոր կառուցվածքային կապիտալը օբյեկտիվ ոչ նյութական ակտիվների (արտոնագրեր, նոու-հաուներ, սպրանքանիշեր և այլն, ինչպես նաև կազմակերպչական կառույցներ, էլեկտրոնային ցանցեր և տվյալների բազաներ) ամբողջությունն է: Այս ամենը ևս մարդկային գործունեության արդյունք է: Բիարկե, այն անհատից առանձնացված է, և դրա գործունեությունն անմիջականորեն կապված չէ հեղինակի անձի հետ: Դրանց իրացման կամ կառավարման գործառույթները կարող են փոխանցվել երրորդ անձանց:

Արտադրության գործընթացում անմիջական մասնակցության տեսանկյունից մտավոր կապիտալը տարանջատվում է հաստատուն և փոփոխական մտավոր կապիտալների: Հաստատունը նախորդ ժամանակահատվածի մտավոր գործունեության առարկայացած հատվածն է: Փոփոխունը աշխատուժի այն զանգվածի գործունեությունն է, որն օժտված է մտավոր, ստեղծագործ աշխատանքային ունակություններով: Այդ անհատը յուրահատուկ գիտելիքների և հմտությունների կրող է:

Վերջին տասնամյակներին զարգացած երկրներն արդյունաբերական տիպի տնտեսությունից անցում կատարեցին հետարդյունաբերական տնտեսության: Եթե առաջինի արդյունավետությունը պայմանավորված էր կապիտալի կիրառման մակարդակով, ապա երկրորդի արդյունավետության գործոնը տեսական գիտելիքի զարգացման և կիրառման մակարդակն է: Առաջնային դիրքեր զբաղեցրին այն ոլորտները, որոնց հիմքում հիմնարար գիտության, տեղեկատվության և գիտելիքների լայնածավալ կիրառությունն էր: Այդ ճյուղերից են կենսատեխնոլոգիան, ծրագրային ապահովումը, ժառանգականությունը, կենսաքիմիան և տարբեր տեղեկատվական (փոխանակության) ենթաճյուղերը, որոնք ներկայացնում են «նոր» տնտեսությունը: Աննախադեպ աճի տեմպեր են ապահովում տեղեկատվական ընկերությունները, որոնց զարգացումը «անհիմն» է արդյունաբերական տնտեսու-

թյան տեսանկյունից: Շահագործելով աննշան հիմնական միջոցներ՝ դրանք հասել են հսկայական հաջողությունների:

Զարգացման հետարդյունաբերական փուլը թևակոխած տնտեսություններում «նորը» ներկայացնող ընկերությունների կապիտալացումը գերազանցում է ավանդական ոլորտների նույն ցուցանիշը ավելի քան երեք անգամ, երբ զբաղվածների թվով զիջում է 1:40.⁸ հարաբերակցությամբ: Սա զարգացման միտումների համոզիչ ապացույց է: Միաժամանակ, հարկ է նշել, որ «նոր» տնտեսության ազդեցության շնորհիվ բարձրանում է նաև «հին» տնտեսության ավանդական ճյուղերի արդյունավետությունը:

Ժամանակակից տնտեսության կառուցվածքային փոփոխությունների ևս մեկ ուղղություն է գիտության աճող դերը հասարակության վերարտադրության գործընթացում: Դրա հավաստիքը զարգացած երկրներում գիտահետազոտական փորձակոնստրուկտորական աշխատանքների (ԳՀՓԿԱ) վրա կատարվող ծախսերի տեսակարար կշռի անընդհատ աճն է:

Գիտության ֆինանսավորման ծավալները զարգացած երկրներում (ԳՀՓԿԱ-ի վրա կատարվող ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %)⁹

	ԱՄՆ	Ճապոնիա	Գերմանիա	Ֆրանսիա	Անգլիա	Իտալիա	Կանադա
1985	2.8	2.6	2.7	2.3	2.3	1.1	1.4
1990	2.7	2.9	2.8	2.4	2.2	1.3	1.5
1995	2.6	2.7	2.5	2.4	2.2	1.3	1.5
2000	2.8	2.9	2.7	2.4	2.3	1.7	1.6
2015	3.0	3.0	2.9	2.6	2.5	2.3	1.9

Կարևոր է ոչ միայն գիտության ոլորտում կատարվող ծախսերի չափը, այլև ֆինանսավորման կառուցվածքը: Վերջին տասնամյակներին գիտության ծախսերում նվազում է պետության կատարած ծախսերի տեսակարար կշիռը: Բյուջետային ծախսերին փոխարինում են գիտատար ֆիրմաների, խոշոր կորպորացիաների գիտահետազոտական ենթահամակարգերը, որոնք, այնուամենայնիվ, հենվում են պետական ենթահամակարգերի՝ կրթության և տնտեսական արտոնությունների համակարգի վրա: Տեղի է ունենում ինովացիոն ոլորտի բուռն զարգացում տնտեսության մասնավոր հատվածում: Զարգացած երկրներում ԳՀՓԿԱ-ի արտաբյուջետային ֆինանսավորումը սկսում է էապես գերազանցել այդ ոլորտի բյուջետային հատկացումները: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) երկրներում այն 1981 թ. 55%-ից 90-ականի կեսին աճել

⁸ St' u **Иванова Н.**, *Инновационная сфера: контуры будущего [Институт мировой экономики и международных отношений (ЗЫЛБХС) п"а ИМЭМО], 2000, N 8, с. 58*]:

⁹ Նույն տեղում, էջ 59:

է միջինը մինչև 67%: Արտաբյուջետային միջոցների հիմնական աղբյուրը ձեռնարկատիրական ոլորտն է, որտեղ առաջնային դիրքեր ունեն խոշոր ազգային և վերազգային կորպորացիաները¹⁰: Բազմիցս նշվել է, որ ձեռնարկատիրական ոլորտը եղել և մնում է ԳՀՓԿԱ-ի խոշորագույն կատարողը ինչպես ծախսավող գումարների ծավալով, այնպես էլ գիտահետազոտական ծրագրերով զբաղվող գիտնականների և ինժեներների թվով¹¹:

Զարգացած երկրներում տեղի ունեցող տեղաշարժերն արժեքավորում են գիտության և կրթության կայուն մասնակցությունը հասարակական վերարտադրության գործընթացում: Շուկայական տնտեսության պայմաններում մասնավոր հատվածի կողմից գիտական հետազոտությունների ֆինանսավորումը ապացույց է այն վարկածի, որ արտադրական գործունեության արդյունքները ուղղակի կախվածության մեջ են գիտության և կրթության ոլորտներից: Արտադրողական ուժերի զարգացումն իր հետքն է թողել նաև ավանդական արդյունաբերական ճյուղերի պահանջների կառուցվածքում: Մեքենա-սարքավորումները ևս մտավոր հագեցվածություն են ստացել, ուստի պահանջվում են բարձրորակ մասնագետներ, որոնք կարող են վերահսկել ողջ տեխնոլոգիական գործընթացը, ընդունել կարևոր որոշումներ և պատասխանատվություն կրել դրանց համար:

Գիտարկված փոփոխություններն ընդգրկում են տնտեսական ողջ համակարգը և հիմնված են արտադրողական ուժերի փոխակերպման (տրանսֆորմացիայի) վրա՝ ոչ միայն դրանց նյութական բաղադրիչի զարգացման, այլև, առաջին հերթին, աշխատողի անհատական առաջընթացի վրա: Արդի ժամանակաշրջանում, տեխնիկայի և տեխնոլոգիայի անվերջ զարգացման պայմաններում, աշխատավորին ներկայացվում են կրթական և որակավորման բարձր պահանջներ, որոնք ընդգրկում են ոչ միայն հատուկ գիտելիքների և հմտությունների համակարգ, այլև որոշակի լրացուցիչ հատկանիշներ, որոնցից կարևորագույնը նոր գաղափարների վերարտադրման (գեներացիայի) ունակությունն է: Այլ կերպ ասած՝ արտադրության զարգացումը և գիտատեխնիկական առաջընթացը պահանջում են մտավոր կապիտալին բնորոշ հատկանիշների առկայություն: Եվ այդ պայմաններում յուրաքանչյուր աշխատող դառնում է դրանց կրողը:

Մտավոր կապիտալը՝ որպես արտադրության նոր գործոն, հաճախ վճռորոշ է դառնում տնտեսության գործունեության և դրա փոփոխությունների համար: Ընդ որում, աշխատողը գիտատեխնիկական առաջընթացի շրջանակում վերածվում է մտավոր կապիտալ կրողի, որն էլ արտադրողական ուժերի հետագա զարգացման հավաստիք է: Միաժամանակ, մտավոր կապիտալ կրողն ունի գաղափարներ արտադրելու կարողություն և (կամ) յուրահատուկ փորձ: Իսկ սեփականությունը ենթադրում է եկամուտ ստանալու հնարավորություն: Ավելին, մտավոր կապիտալի սեփականատերը մենատիրական եկամուտ ստանալու հնարավորություն ունի: Ցայտուն օրինակ են հայտնի բժիշկների, իրավաբանների և այլոց եկամուտները: Այսպիսով, անհատի մեջ կենտրոնացած այդ երկու բնեռները մտավոր

¹⁰ Նույն տեղում, էջ 54:

¹¹ Նույն տեղում, էջ 55:

կապիտալ կրողը և սեփականատերը, էապես տարբերվում են միմյանցից: Այդ բնեռացումն ակնհայտ չէր արդյունաբերական հասարակարգում: Այդ միտումը հաճախ պահպանվում է նաև ժամանակակից տնտեսություններում: Եկամտային տարբերական հիմնախնդիրը տեղային լուծում է ստանում առանձին տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության շրջանակում: Արդի տնտեսագիտության հիմնահարցերից են այդ տարբերական գիտական վերլուծությունը և ընդհանրական կիրառական մոդելների կառուցումը:

XIX դ. սկզբին զարգացած երկրներում աշխատանքային ռեսուրսների ներկայացվում են կրթական և մասնագիտական բավականաչափ բարձր պահանջներ: Միջազգային շուկաներում աշխատանքային ռեսուրսների մրցունակությունը պայմանավորված է ոչ այնքան դրանց գնով, որքան աշխատանքի որակով, աշխատողների կրթական մակարդակով, ինքնուրույն որոշումներ ընդունելու կարողությամբ, կազմակերպչական ունակություններով և նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու հնարավորություններով: Ներկայումս անձի՝ որպես մտավոր կապիտալ կրողի անհատական առաջընթացն անհնար է պատկերացնել առանց մասնագիտական նոր ձեռքբերումների: Իսկ դա անքակտելիորեն կապված է վերապատրաստման համակարգի ձևավորման և զարգացման հետ:

Արդի փուլում խիստ կարևոր է մտավոր կապիտալի արդյունավետ վերարտադրությունը՝ որպես տնտեսական առաջընթացի գրավական: Միաժամանակ, անհրաժեշտ է կրթական համակարգի գործունեության համապատասխանություն տնտեսական միջավայրի պահանջներին: Այս ամենի համար անհրաժեշտ են լուրջ ներդրումներ: Այդուհանդերձ, կրթությանը հատկացվող պետական ծախսերը ՀՀ-ում կրճատվել են՝ ՀՆԱ-ի 7-9%-ից (80-ական թթ.) մինչև 2-3%-ի (90-ական թթ.)¹²: 2005 թ. գիտության և կրթության ոլորտում կատարված պետական ծախսումները կազմել են ՀՆԱ-ի 2.6%¹³-ը, ընդ որում, հետազոտությունների և գիտության զարգացմանն ուղղված համապատասխան ցուցանիշը կազմել է 0.25%: 2000 թ. դրությամբ համապատասխան ցուցանիշները Ճապոնիայում 6,6% և 3% էին¹⁴: Տեսային տնտեսությունների մասնավոր ծախսերը կրթության ոլորտում մոտ երկու անգամ գերազանցում են պետական ծախսումները: Կրթական համակարգի արդյունավետության չափանիշներից է այն, թե որքանով է այդ համակարգը օգնում երիտասարդներին հասարակության մեջ համապատասխան տեղ գրավելու համար, որքան հնարավորություն է ընձեռում կիրառական գիտելիքներ և հմտություններ ստանալու: Հաճախ ապահովված առաջարկը չի համապատասխանում շուկայի պահանջներին, և նույնիսկ բարձրագույն կրթություն ստացած անհատները համալրում են գործազուրկների շարքերը: ՀՀ կառավարության քաղաքականության կարևորագույն հիմնահարցերից է բարձրագույն կրթություն ստանալու մատչե-

¹² Տե՛ս Տնտեսական աճը, անհավասարությունը և աղքատությունը Հայաստանում, ՄԱԿ-ի զեկույց, 2002:

¹³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը (ՀՀ ԱԿԾ, 2006, էջ 124):

¹⁴ Տե՛ս *Мир на рубеже тысячелетий. Прогноз развития мировой экономики до 2015 г. (ИМЭМО, АНРФ, М., 2001, с. 25).*

լիության ապահովումը ֆինանսական և վարկային համակարգի ճկունության և նպատակաուղղված հասարակական ռազմավարության մշակման միջոցով: Միաժամանակ, աշխատանքներ են տարվում չափորոշիչների մշակման, գնահատման¹⁵ համակարգի բարելավման, միջազգային ինտեգրման, հետազոտությունների խրախուսման, դրանք տնտեսության պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Կրթությունը և գիտությունը Հայաստանի կայուն առաջընթացի հիմքն են: Հասարակության անդամների իրազեկությունը, մասնագիտական բարձր որակավորումը, ստեղծագործ աշտատանքի կարողությունը և անհատական առաջընթացի ձգտումը տնտեսության զարգացման

ИНТЕЛЛЕКТУАЛЬНЫЙ КАПИТАЛ КАК УНИКАЛЬНАЯ ФОРМА ВЫРАЖЕНИЯ ЧЕЛОВЕЧЕСКОГО КАПИТАЛА

ГАЛСТЯН А. Н.

Резюме

В последние годы в контексте экономической теории особое место занимает теория интеллектуального капитала. Эволюция функций человеческого капитала в экономике приводит к актуализации и развитию интеллектуальных способностей, что является следствием научно-технического прогресса. Современные компании постиндустриальных экономик не только обеспечивают высокую эффективность производства, но и стимулируют развитие традиционных индустриальных сфер, их технико-технологической базы и информационной насыщенности. В связи с этим важнейшим индикатором будущего экономического развития становится уровень финансирования науки и образования, в частности НИОКР (научно-исследовательские и опытно-конструкторские работы).

¹⁵ Տե՛ս, օրինակ, զարգացած երկրների (տնտեսագիտական) չափորոշիչների համակարգը, դիցույ՝ *National Contents Standarts in Economics, New York, 2000.*